


Հաշվետվություն

ՀՀ Արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության փորձագետ Մերրի Բադալյանի 2020թ.-ի փետրվարի 10-ից հունիսի 19-ը աշխատած ժամանակահատվածի համար

Ես՝ Մերրի Բադալյանս ՀՀ Արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալությունում՝ որպես փորձագետ, աշխատում եմ 2020թ.-ի փետրվարի 10-ից հունիսի 19-ը ընկած ժամանակահատվածում և իրականացրել եմ հետևյալ աշխատանքները:

1. Ապոստիլով վավերացրել եմ բազմաթիվ քաղաքացիների կողմից ներկայացված պաշտոնական փաստաթղթերը, ինչպես նաև թարմացրել եմ ապոստիլով վավերացման ենթակա փաստաթղթերի տրամադրելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց տվյալների շտեմարանը:
2. Օտարերկրյա քաղաքացիների կողմից երեխաների որդեգրման ոլորտի օրենսդրական կատարելագործման վերաբերյալ ներկայացրել եմ առաջարկություններ:
3. Հավաքագրել, դասակարգել, հաշվարկել և թվայնացրել եմ վիճակագրական տվյալների 1991թ.-ից ՀՀ-ում որդեգրված երեխաների, վերջիններիս որդեգրված անձանց տվյալների, որդեգրված պետական գրանցումների, որդեգրված երեխաների հետորդեգրման զեկույցների փաստաթղթային և էլեկտրոնային տարբերակները:
4. Ուսումնասիրել և ներկայացրել եմ «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին Հաազայի 29.05.1996 թ., Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասն» Հաազայի 05.10.1961թ. կոնվենցիաների կից ուղեկցույցների, պաշտոնական փաստաթղթերը ապոստիլով հաստատելու, երեխաների որդեգրման ոլորտը կանոնակարգող միջազգային փորձի իրավակարգավորումները:

ՀՀ Արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության փորձագետ



Մերրի Բադալյան

19.06.2020թ.